

**Միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության գծով Համայնքի
իրավական համակարգը սահմանող՝ Խորհրդի 2009 թվականի հունիսի 25-ի
2009/71/Եվրատոմ հրահանգ**

Պաշտոնական տեղեկագիր L 172 , 02.07.2009թ, էջ 0018 - 0022

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Ատոմային էներգիայի Եվրոպական համայնքի հիմնադրման մասին»
պայմանագիրը և, մասնավորապես, դրա 31-րդ և 32-րդ հոդվածները,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը, որը կազմվել է
Գիտատեխնիկական հարցերով կոմիտեի նշանակած՝ անդամ պետություններում գործող
փորձագետների խմբի եզրակացությունը ստանալուց և Տնտեսական և սոցիալական
հարցերով Եվրոպական կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո [1],

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը [2],

Քանի որ

1) Պայմանագրի 2(բ) հոդվածով նախատեսվում է սահմանել անվտանգության միասնական
ստանդարտներ աշխատողների և հանրության առողջության պաշտպանության համար,

2) Պայմանագրի 30-րդ հոդվածով նախատեսվում է Համայնքի ներսում սահմանել
հիմնական ստանդարտներ իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից
աշխատողների և հանրության առողջության պաշտպանության համար,

3) իոնացնող ճառագայթումից առաջացող վտանգներից աշխատողների և հանրության
առողջության պաշտպանության նպատակով անվտանգության հիմնական ստանդարտները
սահմանող՝ Խորհրդի 1996 թվականի մայիսի 13-ի 96/29/Եվրատոմ հրահանգով [3]
սահմանվում են անվտանգության հիմնական ստանդարտները: Այդ Հրահանգի դրույթները
լրացվել են ավելի մանրամասն դրույթներ սահմանող իրավական ակտերով,

4) ինչպես ճանաչել է Եվրոպական համայնքների արդարադատության դատարանը
(այսուհետ՝ Արդարադատության դատարան)՝ նախադեպային իրավունքի հիման վրա
ընդունած իր որոշումներում, Համայնքն իր անդամ պետությունների հետ միասին կիսում է
Միջուկային անվտանգության մասն կոնվենցիայով [5] կարգավորվող իրավասությունները,

5) ինչպես ճանաչել է Արդարադատության դատարանը նախադեպային իրավունքի հիման վրա ընդունած իր որոշումներում, Պայմանագրի 3-րդ գլխի՝ առողջության և անվտանգության վերաբերյալ դրույթները, մեկ ամբողջություն են կազմում, Հանձնաժողովին օժտելով բավականին լայն՝ միջուկային աղտոտվածության վտանգներից բնակչությանը և շրջակա միջավայրը պաշտպանելու լիազորություններով,

6) ինչպես ճանաչել է Արդարադատության դատարանը նախադեպային իրավունքի հիման վրա ընդունած իր որոշումներում, Պայմանագրի 2(բ) հոդվածով Համայնքի վրա դրված՝ բնակչության և աշխատողների առողջությունը պաշտպանելու հիմնական ստանդարտները սահմանելու խնդիրների իրականացումը չի նշանակում, որ այդ ստանդարտների սահմանումից հետո անդամ պետությունը չի կարող նախատեսել պաշտպանության առավել խիստ միջոցներ,

7) «Ճառագայթային վթարների դեպքում տեղեկությունների անհապաղ փոխանակման վերաբերյալ Համայնքի մեխանիզմների մասին» Խորհրդի 1987 թվականի դեկտեմբերի 14-ի 87/600/Եվրատոմ որոշմամբ [6] սահմանվում է ծանուցումների և տեղեկությունների տրամադրման համակարգ, որը պետք է կիրառվի անդամ պետությունների կողմից՝ ճառագայթային վթարների դեպքում հանրությանը պաշտպանելու նպատակով: «Ճառագայթային վթարների դեպքում առողջության պաշտպանության միջոցների կիրառության և ձեռնարկվող քայլերի վերաբերյալ բնակչությանը տեղեկացնելու մասին» Խորհրդի 1989 թվականի նոյեմբերի 27-ի 89/618/Եվրատոմ հրահանգով [7] անդամ պետությունների վրա դրվեցին ճառագայթային վթարների դեպքում հասարակությանը տեղեկացնելու պարտավորություններ,

8) անդամ պետությունների միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության մասով ազգային պարտավորությունն այն հիմնարար սկզբունքն է, որի հիման վրա միջազգային մակարդակով մշակվել են միջուկային անվտանգության կանոններ՝ հաստատված Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայով: Պետք է կատարելագործվի ազգային պարտավորության և միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության մասով ազգային իրավասու կարգավորող մարմնի հսկողության ներքո արտոնագրատիրոջ կողմից իրականացվող հիմնական պարտականության սկզբունքը, ինչպես նաև սույն Հրահանգով պետք է ամրապնդվի իրավասու կարգավորող մարմինների կարգավորիչ դերն ու անկախությունը,

- 9) յուրաքանչյուր անդամ պետություն համապատասխան ազգային քաղաքականության համաձայն կարող է որոշել իր էներգետիկ կառուցվածքը,
- 10) սույն Հրահանգով նախատեսված համապատասխան ազգային համակարգի մշակման ժամանակ հաշվի են առնվում ազգային հանգամանքները,
- 11) անդամ պետություններն արդեն իրականացրել են միջոցառումներ, որոնք հնարավորություն են տվել նրանց Համայնքի սահմաններում հասնելու միջուկային անվտանգության բարձ մակարդակի,
- 12) մինչ սույն Հրահանգը գլխավորապես անդրադառնում է միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգությանը, կարևոր է նաև ապահովել աշխատած վառելիքի և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարումը՝ այդ թվում նաև պահեստարաններում և դրանց վնասազերծման կառուցվածքներում,
- 13) անդամ պետություններն, անհրաժեշտության դեպքում, պետք է գնահատեն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության [8] կողմից սահմանված անվտանգության համապատասխան հիմնարար սկզբունքները, որոնք կազմում են գործելակերպերի մի համակարգ, որ պետք է հաշվի առնվի անդամ պետությունների կողմից՝ սույն Հրահանգն իրականացնելիս,
- 14) Օգտակար է հիմնվել իրենց տարածքում ատոմային էլեկտրակայան ունեցող անդամ պետությունների ազգային անվտանգության մարմինների Արևմտաեվրոպական միջուկային կարգավորողների ասոցիացիայի (WENRA) շրջանակներում իրականացված համատեղ աշխատանքային գործընթացի վրա, որի արդյունքում էներգետիկ միջուկային ռեակտորների համար սահմանվել են անվտանգության բազմաթիվ կողմնորոշիչ մակարդակներ,
- 15) Հետևելով ԵՄ մակարդակով բարձրաստիճան խումբ կազմավորելու Խորհրդի հրավերին, որի մասին նշված է միջուկային անվտանգության և աշխատած միջուկային վառելիքի և ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման վերաբերյալ Խորհրդի 2007 թվականի մայիսի 8-ի եզրակացություններում՝ «Միջուկային անվտանգության և թափոնների կառավարման հարցերով Եվրոպական բարձրաստիճան խմբի հիմնադրման մասին» Հանձնաժողովի 2007 թվականի հուլիսի 17-ի 2007/530/Եվրատոմ որոշմամբ [9] հիմնադրվեց Եվրոպական միջուկային անվտանգության կարգավորողների խումբը (ENSREG)՝ կոչված նպաստելու միջուկային անվտանգության ոլորտի նպատակների իրականացմանը,

16) օգտակար է սահմանել սույն Հրահանգի իրականացման վերաբերյալ անդամ պետությունների կողմից Հանձնաժողովին հաշվետվություններ ներկայացնելու միասնական համակարգ: Հաշվի առնելով Եվրոպական միջուկային անվտանգության կարգավորողների խմբի անդամների մեծ փորձը այն կարող է արժեքավոր ներդրում ունենալ այս առումով՝ օժանդակելով ազգային կարգավորող մարմինների միջև իրականացվող խորհրդատվություններին և համագործակցությանը,

17) 2008 թվականի հոկտեմբերի 15-ին կայացած Եվրոպական միջուկային անվտանգության կարգավորողների խմբի հինգերորդ հանդիպմանը ընդունվեցին 10 սկզբունքներ, որոնք պետք է կիրառվեն միջուկային անվտանգության վերաբերյալ հրահանգ մշակելիս, ինչպես նշված է 2008 թվականի նոյեմբերի 20-ի արձանագրություններում,

18) միջուկային տեխնոլոգիաների առաջընթացը, ինչպես նաև շահագործման փորձից, միջուկային անվտանգության մասով իրականացված հետազոտությունից և կարգավորիչ համակարգի բարելավումներից քաղված դասերը հնարավոր են դարձնում անվտանգության հետագա բարելավումը: Անվտանգության պահպանման և բարելավման իրենց պարտավորության համաձայն անդամ պետությունները ատոմային էներգիայի իրենց ծրագրերի ընդլայնման կամ առաջին անգամ ատոմային էներգիա օգտագործելու մասին որոշում կայացնելիս պետք է հաշվի առնեն այդ գործոնները,

19) միջուկային տեղակայանքի ներսում կայուն անվտանգության մշակույթի ձևավորումը անվտանգության կառավարման հիմնարար սկզբունքներից է, որն անհրաժեշտ է տեղակայանքի անվտանգ շահագործման ապահովման համար,

20) միջուկային անվտանգության հետ կապված փորձառության և հմտությունների պահպանումն ու հետագա զարգացումը պետք է հիմնվի, մասնավորապես, շահագործման անցյալի փորձից դասեր քաղելու եղանակի և համապատասխան դեպքերում գիտության և մեթոդաբանության ոլորտում կիրառվող ձեռքբերումների վրա,

21) անցյալում անդամ պետություններում ինքնազնահատումներն իրականացվել են ԱԷՄԳ-ի աջակցությամբ՝ Կարգավորող մարմինների գործունեության դիտարկման միջազգային խմբի (ԿՄԳԴՄԽ) կամ Կարգավորող մարմինների գործունեության համապարփակ դիտարկման ծառայության (ԿՄԳՀԴԾ) պատվիրակությունների կողմից իրականացված միջազգային փորձագիտական գնահատումների հետ սերտ փոխկապակցվածությամբ: Նշված պատվիրակություններն անդամ պետությունների կողմից հրավիրվել են կամավորական հիմունքներով և այդ ինքնազնահատումներն իրականացվել են

հրապարակայնության և թափանցիկության ոգով: Ինքնագնահատումներն ու օրենսդրական, կարգավորիչ և կազմակերպչական ենթակառուցվածքների հարակից փորձագիտական գնահատումները պետք է նպատակաուղղված լինեն անդամ պետությունների ազգային համակարգերի հզորացմանն ու կատարելագործմանը՝ միևնույն ժամանակ ճանաչելով անդամ պետությունների տարածքում գտնվող միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության պահպանման վերջիններիս իրավասությունները: Ինքնագնահատումները և դրանց հետևող միջազգային փորձագիտական գնահատումները դիտարկվում են ոչ որպես ստուգում և ոչ որպես աուդիտ, այլ որպես միմյանցից սովորելու մեխանիզմ, որի դեպքում միջուկային կայուն անվտանգության ռեժիմի ապահովմանը նպաստող անդամ պետությունների կարգավորիչ, տեխնիկական և քաղաքական խնդիրները դիտարկելիս իրավասու կարգավորող մարմնի գործելակերպում և կազմակերպչական համակարգում տարբեր մոտեցումներ են ընդունվում: Միջազգային փորձագիտական գնահատումները պետք է դիտվեն որպես անկեղծության և համագործակցության մթնոլորտում գործընկերների հետ ոչ վերահսկողական կամ քննադատական, այլ ավելի խորհրդատվական բնույթի երկխոսության միջոցով մասնագիտական փորձի, քաղված դասերի, ինչպես նաև լավ գործելակերպերի վերաբերյալ փորձի փոխանակման հնարավորություն: Անդամ պետությունների առկա տարբեր համակարգերին համապատասխանելու և դրանց նկատմամբ ճկունություն դրսևորելու անհրաժեշտության դեպքում անդամ պետությունն ազատ է որոշել իր համակարգի այն հատվածները, որոնք միջուկային անվտանգության շարունակական բարելավման նպատակով պետք է ենթարկվեն հատուկ հրավիրված փորձագիտական գնահատման,

22) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետին համապատասխան [10]՝ անդամ պետություններին պետք է խրախուսել, իրենց և Համայնքի շահերից ելնելով, կազմել սույն Հրահանգի և փոխատեղման միջոցների համեմատական աղյուսակներ և հրապարակել դրանք,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ 1

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

Հոդված 1

Նպատակները

Սույն Հրահանգի նպատակներն են՝

- ա) միջուկային անվտանգության և դրա կանոնների շարունակական բարելավման գործընթացի պահպանման և խթանման նպատակով Համայնքի իրավական համակարգի սահմանումը.
- բ) միջուկային տեղակայանքների իոնացնող ճառագայթումից բխող վտանգներից հանրությանը և աշխատողներին պաշտպանելու նպատակով անդամ պետությունների կողմից համապատասխան ազգային կարգավորումների նախատեսման ապահովումը:

Հոդված 2

Գործողության ոլորտը

1. Սույն Հրահանգը կիրառվում է խաղաղ նպատակով միջուկային ցանկացած տեղակայանքի նկատմամբ, որը գործում է 3(4) հոդվածով սահմանված արտոնագրի ներքո՝ այդ արտոնագրով նախատեսվող բոլոր փուլերում:
2. Սույն Հրահանգը չի խոչընդոտում անդամ պետությունների կողմից սույն Հրահանգի կարգավորման առարկայի մասով անվտանգության առավել խիստ միջոցների ձեռնարկմանը՝ Համայնքի օրենսդրությանը համապատասխան:
3. Սույն Հրահանգը լրացնում է Պայմանագրի 30-րդ հոդվածում նշված միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության վերաբերյալ հիմնական ստանդարտներին՝ չհակասելով 96/29/Եվրատոմ հրահանգին:

Հոդված 3

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները՝

1. «միջուկային տեղակայնք» նշանակում է՝

ա) հարստացուցիչ կայանք, միջուկային վառելիքի արտադրության գործարան, ատոմային էլեկտրակայան, վերամշակման կայանք, աշխատած միջուկային վառելիքի պահեստարան և բ) նույն վայրում գտնվող ռադիոկատիվ թափոնների համար նախատեսված պահեստներ, որոնք ուղղակիորեն կապ ունեն (ա) կետում թվարկված միջուկային տեղակայանքների հետ.

2. «միջուկային անվտանգություն» նշանակում է պատշաճ շահագործման պայմանների ապահովում, դժբախտ պատահարների կանխում և պատահարների հետևանքների մեղմացում, որոնք հանգեցնում են միջուկային տեղակայանքների իոնացնող ճառագայթումից բխող վտանգներից աշխատողների և հանրության պաշտպանությանը:

3. «իրավասու կարգավորիչ մարմին» նշանակում է միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության կարգավորման ոլորտում գործող և անդամ պետությունում նշանակված գերատեսչություն կամ գերատեսչական համակարգ՝ 5-րդ հոդվածում նշվածին համապատասխան.

4. «արտոնագիր» նշանակում է անդամ պետության իրավազրության ներքո շնորհված ցանկացած իրավական փաստաթուղթ, որով վերապահվում է միջուկային տեղակայանքի տեղակայման նախագծման, կառուցման, շահագործման և գործարկման կամ շահագործման դադարեցման պարտականություն.5. «արտոնագրատեր» նշանակում է

իրավաբանական կամ ֆիզիկական այն անձը, ով ունի միջուկային տեղակայանքի նկատմամբ լիցենզիայով սահմանված բոլոր պարտականությունները:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 4

Օրենսդրական, կարգավորիչ և կազմակերպչական համակարգ

1. Անդամ պետությունները միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության համար ստեղծում և պահպանում են ազգային օրենսդրական, կարգավորիչ և կազմակերպչական համակարգ (այսուհետ՝ ազգային համակարգ), որով համապատասխան պետական մարմինների միջև բաշխվում են պարտականություններ և նախատեսվում համաձայնեցում: Ազգային համակարգով սահմանվում են հետևյալ պարտականությունները՝

ա) միջուկային անվտանգության պահանջների ընդունում: Դրանց ընդունման կարգի և կիրառման գործիքների վերաբերյալ որոշման կայացումը անդամ պետությունների իրավասությունն է.

բ) արտոնագրման համակարգի ապահովում և արտոնագրի բացակայության դեպքում՝ միջուկային տեղակայանքի շահագործման արգելում.

գ) միջուկային անվտանգության վերահսկողության համակարգի ապահովում.

դ) հարկադիր բնույթի գործողությունների իրականացում՝ ներառյալ արտոնագրի գործողության կասեցում, փոփոխություն կամ չեղյալ ճանաչում:

2. Անդամ պետություններն ապահովում են որպեսզի ազգային համակարգը նպատակահարմար դեպքում հաստատվի և բարելավվի՝ հնարավոր և համապատասխան դեպքերում հաշվի առնելով շահագործման փորձը, միջուկային տեղակայանքի անվտանգության վերլուծության արդյունքում ձևավորված տեսակետները, տեխնոլոգիական զարգացումը և անվտանգության վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները:

Հոդված 5

Իրավասու կարգավորող մարմին

1. Անդամ պետությունները ձևավորում և պահպանում են միջուկային տեղակայանքների միջուկային անվտանգության ոլորտի իրավասու կարգավորող մարմին:

2. Անդամ պետություններն ապահովում են միջուկային էներգիայի արտադրությամբ զբաղվող կամ այն օգտագործող՝ այդ թվում նաև էլեկտրաէներգիայի արտադրության համար, ցանկացած այլ մարմնից կամ կազմակերպությունից իրավասու կարգավորող մարմնի ֆունկցիոնալ առումով անկախ լինելը՝ վերջինիս կողմից կայացվող կարգավորիչ որոշումների վրա անհարկի ազդեցությունից արդյունավետ կերպով զերծ մնալու նպատակով:

3. Անդամ պետություններն ապահովում են, որպեսզի իրավասու կարգավորող մարմնին տրվեն օրինական լիազորություններ, ինչպես նաև 4(1) հոդվածում ներկայացված ազգային համակարգի հետ կապված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ՝ առաջնայնությունը տալով անվտանգությանը: Դրանք ներառում են լիազորություններ և ռեսուրսներ՝

ա) պահանջելու համար, որպեսզի արտոնագրատերը բավարարի միջուկային անվտանգության ազգային պահանջները և համապատասխան արտոնագրի պայմանները.

բ) պահանջելու համար, որպեսզի ներկայացվեն նշվածներին, ինչպես նաև 6-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ պարբերություններով սահմանված պահանջներին համապատասխանելու մասով փաստարկներ.

գ) հաստատելու համար նշված համապատասխանությունը՝ կարգավորիչ գնահատումների և ստուգումների միջոցով.

դ) իրականացնելու համար կարգավորիչ հարկադիր բնույթի գործողություններ՝ ներառյալ միջուկային տեղակայանքի շահագործման կասեցումը՝ 4(1) հոդվածում նշված ազգային համակարգով սահմանված պայմանների համաձայն:

Հոդված 6

Արտոնագրատերերը

1. Անդամ պետություններն ապահովում են արտոնագրատիրոջ կողմից միջուկային տեղակայանքի միջուկային անվտանգության ապահովման հիմնական պարտականության ստանձնումը: Այդ պարտականությունը պատվիրակման ենթակա չէ:

2. Անդամ պետություններն ապահովում են, որպեսզի առկա ազգային համակարգով արտոնագրատերերից պահանջվի իրավասու կարգավորող մարմնի հսկողության ներքո

պարբերաբար գնահատել և ստուգել, ինչպես նաև իրագործելիության հնարավոր սահմաններում շարունակաբար բարելավել միջուկային իրենց տեղակայանքի միջուկային անվտանգությունը՝ սիստեմատիկ և ստուգման ենթակա եղանակով:

3. 2-րդ պարբերության մեջ նշված գնահատումները ներառում են պատահարների կանխման և դրանց հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցների առկայության, ինչպես նաև անվտանգության հետ կապված այնպիսի տեխնիկական խոչընդոտների և վարչական ընթացակարգերի մասով ստուգումներ, որոնց ձախողման արդյունքում աշխատողները և հասարակությունը կարող են էապես վնասվել իոնացնող ճառագայթումից:

4. Անդամ պետություններն ապահովում են, որպեսզի առկա ազգային համակարգով արտոնագրատերերից պահանջվի ստեղծել և գործողության մեջ դնել միջուկային անվտանգությանն առաջնայնություն տվող, ինչպես նաև իրավասու կարգավորող մարմնի կողմից պարբերաբար ստուգման ենթակա կառավարման համակարգեր:

5. Անդամ պետություններն ապահովում են, որպեսզի առկա ազգային համակարգով արտոնագրատերերից պահանջվի նախատեսել և օգտագործել համապատասխան ֆինանսական և մարդկային ռեսուրսներ՝ միջուկային տեղակայանքի միջուկային անվտանգության մասով 1-ից մինչ 4-րդ պարբերություններում նշված իրենց պարտավորությունների կատարման համար:

Հոդված 7

Միջուկային անվտանգության ապահովման փորձառությունն ու հմտությունները

Անդամ պետություններն ապահովում են, որպեսզի առկա ազգային համակարգով միջուկային անվտանգության ապահովման փորձառության և հմտությունների պահպանման և հետագա զարգացման նպատակով բոլոր կողմերից պահանջվի, որպեսզի վերջիններս միջուկային տեղակայանքի միջուկային անվտանգության մասով պարտականություններ ունեցող իրենց աշխատակիցների համար ձեռնարկեն ուսումնական և վերապատրաստական միջոցառումներ:

Հոդված 8

Հանրության իրազեկումը

Անդամ պետություններն ապահովում են, որպեսզի աշխատողներին և հասարակությանը տրամադրվի միջուկային անվտանգության կարգավորմանն առնչվող տեղեկատվություն: Սույն պարտավորությամբ ապահովվում է նաև իրավասու կարգավորող մարմնի կողմից, վերջինիս իրավասության սահմաններում, հասարակության իրազեկումը: Հասարակությանը տեղեկատվություն է տրամադրվում ազգային օրենսդրության և միջազգային պարտավորությունների համաձայն՝ պայմանով, որ այն չի վտանգում ազգային օրենսդրությամբ կամ միջազգային պարտավորություններով ճանաչված այլ, մասնավորապես, անվտանգությանն առնչվող շահերին:

Հոդված 9

Հաշվետվություններ ներկայացնելը

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի իրականացման վերաբերյալ առաջին անգամ պետք է Հանձնաժողովին հաշվետվություն ներկայացնեն մինչ 2014 թվականի հուլիսի 22-ը և այնուհետև՝ ամեն երեք տարին մեկ անգամ՝ Միջուկային անվտանգության մասին կոնվենցիայով սահմանված վերահսկողության և հաշվետվության փուլերի համաձայն:
2. Հանձնաժողովը, անդամ պետությունների կողմից տրամադրված հաշվետվությունների հիման վրա, հաշվետվություն է ներկայացնում Խորհրդին և Եվրոպական պառլամենտին՝ սույն Հրահանգի իրականացման արդյունքում գրանցված առաջընթացի վերաբերյալ:
3. Անդամ պետություններն առնվազն յուրաքանչյուր 10 տարին մեկ անգամ պետք է նախատեսեն իրենց ազգային համակարգի և իրավասու կարգավորող մարմինների պարբերական ինքնազնահատում, ինչպես նաև միջուկային անվտանգության շարունակական բարելավման նպատակով կազմակերպեն իրենց ազգային համակարգի և (կամ) մարմինների համապատասխան ոլորտների միջազգային փորձագիտական գնահատում: Ցանկացած փորձագիտական գնահատման արդյունքների մասին, վերջիններիս առկայության դեպքում, զեկուցվում է անդամ պետություններին և Հանձնաժողովին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 10

Փոխատեղումը

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերն ու վարչական դրույթները ոչ ուշ քան 2011 թվականի հուլիսի 22-ը: Նրանք այդ մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են նշված ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտներում, ինչպես նաև այդ դրույթներում կատարված հետագա բոլոր փոփոխությունները:

Հոդված 11

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

Հոդված 12

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Լյուքսեմբուրգում, 2009 թվականի հունիսի 25-ին:

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

L. Մայքո

[1] 2009 թվականի հունիսի 10-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

[2] Եվրոպական պառլամենտի 2009 թվականի ապրիլի 22-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

[3] ՊՏ թիվ L 159, 29.06.1996թ., էջ 1:

[4] C-187/87 (1988 ECR էջ. 5013), C-376/90 (1992 ECR I-6153) և C-29/99 (2002 ECR I-11221):

[5] ՊՏ թիվ L 318, 11.12.1999թ., էջ 21:

[6] ՊՏ թիվ L 371, 30.12.1987թ., էջ 76:

[7] ՊՏ թիվ L 357, 07.12.1989թ., էջ 31:

[8] ԱԷՄԳ-ի անվտանգության հիմնադրույթներ՝ Անվտանգության հիմնարար սկզբունքներ, ԱԷՄԳ-ի անվտանգության ստանդարտների շարք թիվ SF-1 (2006):

[9] ՊՏ թիվ L 195, 27.07.2007թ., էջ 44:

[10] ՊՏ C 321, 31.12.2003թ., էջ 1: